ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Արվեստի կարևորությունը դպրոցում

Հետազոտող՝ Ա. Հովհաննիսյան (կերպարվեստի ուսուցիչ)
Ղեկավար՝ Լ. Իսկոյան (մանկ.գ.թ.,դոցենտ)

Երևան 2022

Ներածություն

Դպրոցը կրթություն ստանալու և աշակերտներին ապագայի համար նախապատրաստելու համար է: Հենց սկզբից այն ձևավորում է աշակերտներին, թե ովքեր են նրանք մեծանալու և ինչով են զբաղվելու: Երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնելու համար՝ նրանք պետք է ամեն ինչից մի քիչ սովորեն: Դպրոցը ոչ միայն պետք է տա տեղեկություններ տարբեր ոլորտների մասին, այլև սովորեցնի լրացուցիչ գիտելիքներ փնտրելու կարողություն: Դպրոցները կենտրոնանում են ստանդարտ թեստավորման վրա և կարևորում միավորները բարելավելը, այսպիսով, զբաղեցնում են ուսուցիչների և աշակերտների միտքը, չթողնելով նրանց ստեղծագործ և նորարար լինել: Ահա, այստեղ, օգնության է գալիս արվեստը:

Գեղարվեստական կրթությունը կենսական նշանակություն ունի աշակերտների համար: Նրանք ունենում են հնարավորություն ուսումնասիրելու իրենք իրենց, իրենց մշակույթը, հասարակությունը: Արվեստի դասերին մասնակցելով նրանք սկսում են այլ կերպ պատկերացնել աշխարհը: Բայց անհրաժեշտ է ուղղորդել և զարգացնել սովորողներին որակյալ արվեստի դասերի միջոցով՝ նրանց հասկացողությունն ու հարաբերությունները շրջապատող աշխարհի հետ ավելի լավը դարձնելու համար: Արվեստի դասերը աշակերտների վրա կարող են ունենալ այնպիսի ազդեցություն, որը չի կարող տալ որևէ այլ առարկա: Նկարչությունը զարգացնում է երեխայի ստեղծագործական կարողությունը, մտածողության գործընթացը և արտահայտվելու ձևը: Արվեստը կարևոր հատկանիշ կլինի անհատների համար: Այն նրանց օգուտ կբերի ոչ միայն անձնական, այլև մասնագիտական առումով, քանի որ աշխարհի լավագույն գործատուները կնախընտրեն աշխատանքի ընդունել ամենաստեղծարար և ամենանորարար անհատներին: Իսկ կերպարվեստի ուսուցիչները կօգնեն ուղղորդել երեխայի մտավոր զարգացումը: Գեղարվեստական կրթության կարևորությունը կարելի է

հասկանալ սովորողների կողմից ձևավորվող սովորությունների միջոցով: Աշակերտները արվեստ ստեղծելիս բացահայտում են նոր բաներ, այնուհետև, կարողանում են նոր գիտելիքները կիրառել առօրյա կյանքում: Աշակերտները սկսում են ամենինչին ստեղծագործ մոտեցում ցույց տալ, ինչն էլ կարող է արդյունավետ լինել այլ առարկաներ սովորելիս: Արվեստի նախագծերը երեխաներին սովորեցնում են արդյունավետ լուծումներ գտնելու և դրանցից սովորելու արժեքը: Գեղարվեստական կրթությունը էական է աճի և զարգացման համար, քանի որ երեխաները ոչ միայն ստեղծագործական ունակություններ են արտահայտում, այլև կյանքի կարևոր դասեր են սովորում:

Դպրոցներում գեղարվեստական կրթության բարելավմանն ուղղված քայլեր

Դպրոցները պետք է մի քանի միջոցներ ձեռնարկեն գեղարվեստական կրթության բարելավման համար:

- Այլ առարկայական ուսուցիչները կարող են օգտագործել արվեստի տարբեր աշակերտների հետաքրքրությունը գրավելու համար:
- Ուսուցիչները և դպրոցի ղեկավարությունը պետք է համագործակցելով ապահովեն, որ արվեստը ինտեգրվի դպրոցական ուսումնական ծրագրում:

- Արվեստի դասերը պետք է անցկացնեն հատուկ պատրաստված արվեստի ուսուցիչները:
- Ուսուցիչները կարող են անցնել հատուկ վերապատրաստում, որպեսզի արվեստի միջոցով ներգրավեն դասապրոցեսին ավելի շատ աշակերտ (երաժշտություն, ստեղծագործական աշխատանքներ, պաստառներ և այլն):
- Դպրոցը պետք է կազմակերպի սեմինարներ՝ օգտագործելով արվեստը, երաժշտությունը, գրականությունը, որոնց միջոցով ուսումն ավելի հետաքրքիր գործընթաց կդառնա աշակերտների համար:
- Արվեստի դասերը պետք է անցկացվեն հատուկ դասասենյակներում, որտեղ կբացակայի ստանդարտ դասասենյակի ձևը, կտա հնարավորություն ավելի ազատ ու անկաշկանդ աշխատելու և մտածելու հնարավորություն:
- Միջին դասարաններում աշակերտը ունենա հնարավորություն ընտրելու կերպարվեստի որևէ տեսակ, որի ժամանակ կարող է աշխատել սեփական պրոեկտի վրա , ստանալով ուսուցչի աջակցությունը:
- Դպրոցը պետք է ապահովված լինի կերպարվեստի համար անհրաժեշտ նյութերով:

Պատճառներ, թե ինչու է արվեստի ինտեգրումը դպրոցում կարևոր

- Արվեստն օգնում է սովորողներին զարգացնել ստեղծագործական խնդիրներ լուծելու հմտություններ:
- Արվեստի ուսուցումն օգնում է երեխաներին զարգացնել շարժիչ հմտությունները, սոցիալական հմտությունները, որոշումներ կայացնելը, ռիսկի դիմելը և հնարամտությունը:
- Օգնում է գրավել այն աշակերտների ուշադրությունը, որոնք այլ կերպ չեն ուզում ինտեգրվել դասապրոցեսի մեջ:
- Խթանում է քննադատական մտածողությունը՝ սովորեցնելով աշակերտներին ավելի զգույշ և մանրամասնորեն զննել շրջապատող աշխարհը:
- Սովորեցնում է աշակերտին մարտահրավեր նետել ինքն իրեն բոլոր մակարդակներում:
- Արվեստը կապում է աշակերտին, ինչպես սեփական մշակույթի, այնպես էլ ավելի լայն աշխարհի հետ:
- Այն ձևավորում է աշակերտի հոգևոր նկարագիրը, նրանց զգացմունքներն ու մտքերը:
- Արվեստի միջոցով աշակերտը, անգամ ենթագիտակցորեն, կարողանում է արտահայտվել, ինչն էլ դաստիարակության կարևոր խթան է հանդիսանում:
- Բացահայտում է աշակերտի ստեղծագործական ներուժը:
- Աշակերտը սովորում է գեղարվեստական որոշակի տերմիններ և դրանց իմաստները:
- Գեղարվեստական գործերը քննարկելիս աշակերտի մոտ ձևավորվում է նախորդ կետում նշվածները ճիշտ օգտագործելու ունակություն:
- Գեղարվեստական գործերը քննարկելիս նրա մոտ զարգանում է քննադատական դատողությունը:
- Ստեղծագործական աշխատանքը նպաստում է դրական ինքնագնահատականի և ինքնավստահության ձևավորմանը:

- Աշակերտի նկարներում արտացոլվում է նրա հոգեբանական զարգացումը, ինչն էլ կարող է ահազանգել նրա բնականոն զարգացման խաթարման մասին:
- Աշակերտը սովորում է խմբային աշխատել և համագործակցել:

Կերպարվեստի դասասենյակը դպրոցում

Արվեստի դասերը որակյալ և արդյունավետ անցկացնելու համար, բավական չէ ունենալ լավ կազմված ծրագիր: Հարկավոր են համապատասխան պայմաններ և նյութեր:

Արվեստը սովորեցնում է տարբերվող և ստեղծագործ մտածողության հմտություններ, ինչն այնքան էլ արդյունավետ չի լինում ստանդարտ դասասենյակներում: Որպեսզի աշակերտի ստեղծագործականության զարգացումը շարունակական գործընթաց լինի, անհրաժեշտ է կիրառել այլընտրանքային նկարչական միջոցներ: Իսկ դրան պետք է նպաստեն ճիշտ պայմանները, շրջապատող միջավայրը պետք է լինի բազմազան, տարբերվող:

Աշակերտներին տրվում է մարտահրավեր, որն ինքը պետք է գեղարվեստորեն լուծի: Ժամանակակից կրթության մեջ նոր է սկսվել նախագծային ուսուցումը, որն ունի մեծ առավելություններ, իսկ արվեստի դասերը դա անում է անընդհատ: Արվեստը դպրոցում ապահովում է գեղեցիկ ուսումնական միջավայր, և դպրոցի ղեկավարությունը պարտավոր է տալ ազատ միջավայր և հնարավորություն աշակերտների արվեստի ցուցադրության համար, ոչ միայն նկարների, այլև՝ թեմատիկ ինստալյացիաների: Պետք է թույլ տալ արվեստի դասերն անցկացնել

դպրոցի պատերից էլ դուրս, չսահմանափակել և չարգելել, երբ խոսքը հասնում է նկարելուն: Աշակերտների արվեստը չպետք է փակ մնա դասասենյակում, այն անհրաժեշտ է տարածել դպրոցում և անգամ դպրոցից դուրս: Հնարավորություն տալ այլ աշակերտներին, նրանց ծնողներին և ուսուցիչներին դիտել և գնահատել նրանց աշխատանքների արդյունքը:

Դասարանում միաժամանակ սովորում են շնորհալի, թույլ կարողությունների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ: Որպեսզի բոլորին համապատասխան վերաբերմունք ցուցադրվի և արդյունավետ լինի աշխատանքը, հարկավոր է դպրոցում ընդարձակ արվեստի դասարան, որտեղ կլինեն բոլոր անհրաժեշտ պայմանները, նյութերն ու առարկաները: Բնագիտական առարկաների համար նախատեսված ժամանակակից ռեսուրսներով կահավորված լաբորատորիաները նպաստում են գիտության մեջ աշակերտի ներուժի բացահայտմանը, փորձարկումների միջոցով ապագա հաջողության հիմքերը դնելուն, և պակաս կարևոր չէ դպրոցում արվեստանոցի առկայությունը, որը կարևոր դեր կխաղա աշակերտներին ոգեշնչելու և ստեղծագործելու, աճի և աշխարհը հասկանալ ուղղորդելու համար:

Ամփոփում

Գեղարվեստական կրթությունը կարևոր է երեխաների զարգացման համար: Շատ դպրոցներում լայն տարածում է գտնում այն կարծիքը, որ գեղարվեստական կրթությունը անհրաժեշտություն չէ և այնքան էլ կարևոր չէ այսօրվա աշակերտների կյանքում: Արվեստի դասերը մշտապես համեմատվում են հիմնական դասերի հետ,

ինչպիսիք են մաթեմատիկան կամ մայրենի լեզուն: Շատերը կարծում են, որ հիմնական դասերը շատ ավելի արժեքավոր են երեխայի կրթության համար, այդ իսկ պատճառով արվեստը համարվում է անկարևոր առարկա դպրոցում, և չի ֆինանսավորվում արվեստանոցներ և խմբակներ բացելու համար: Այնինչ, արվեստը երեխաներին առաջարկում է կյանքի վերաբերյալ քննադատական դասեր, որոնց նրանք չեն ենթարկվում մյուս դասաժամերին: Արվեստի ուսուցիչները խթանում են աշակերտների ստեղծագործական գործունեությունը և երևակայությունը՝ միաժամանակ թույլ տալով նրանց արտահայտվել: